Փոփոխություն

համագործակցության առաջարկ
մարդու իրավունքների հաղորդակցության մասնագետի համար

❍ փորձագիտական աշխատանքի նկարագիրը

մարդու իրավունքների հաղորդակցության մասնագետը պետք է՝

- մշակի ապահնստիտուցիոնալացման վերաբերյալ նարատիվներ, որոնք արտացոլում են մարդու հիմնարար իրավունքների գաղափարները, եւ
- ըստ կարիքի՝ ուսանողներից ստացված հետադարձ առաջարկների եւ մեկնաբանությունների հիմքով՝ վերանայի ու վերջնականացնի մշակած նարատիվները:

❍ աշխատանքի տեխնիկական նկարագիրը

մշակված նարատիվները պետք է ներկայացվեն գրավոր՝ պահպանելով հետեւյալ պահանջները.

- լեզուն՝ հայերեն
- տառատեսակը՝ Arial 12 կամ Tahoma 12
- ծավալը՝ 3 նարատիվ
- **առաջնային տարբերակի մշակման վերջնաժամկետը՝ 2025 թվականի մարտի 3**
- **վերջնական տարբերակի մշակման վերջնաժամկետը՝ 2025 թվականի մարտի 31**

❍ համագործակցության համար անհրաժեշտ պայմանները

համագործակցության համար կարող են դիմել այն անձինք, ովքեր՝

- ☑ ունեն մարդու իրավունքների հաղորդակցության կամ սոցիալական քաղաքականության կամ հարակից ոլորտային կրթություն,
- ☑ ունեն մարդու իրավունքների հաղորդակցության կամ սոցիալական արդարության կամ սոցիալական փոփոխություններին առնչվող աշխատանքային փորձ,
- ☑ ունեն նարատիվների մշակման փորձառություն,
- ☑ ունեն մարդու հիմնարար իրավունքների եւ ապահնստիտուցիոնալացման գործընթացի վերաբերյալ խորքային իրազեկվածություն,
- ☑ պատրաստակամ են հոգեկան առողջությանն առնչվող հասկացությունները կիրառել մարդու իրավունքների մոդելից բխող մոտեցմամբ,

Փոփոխություն

- ☑ հարգում են մարդու արժանապատվությունը, հիմնարար իրավունքները,
- ☑ գենդերազգայուն են,
- ☑ անհանդուժող են խտրականության, սեքսիզմի, հոմոֆոբիայի, տրանսֆոբիայի ցանկացած դրսեւորման հանդեպ:

❍ դիմելու կարգը

հետաքրքրված փորձագետները մինչ **2025 թվականի փետրվարի 7-ը** կարող են նամակ ուղարկել info@changengo.org էլփոստին՝ նամակի թեմայի տողում նշելով **մարդու իրավունքների հաղորդակցության մասնագետ**

նամակին կից անհրաժեշտ է ներկայացնել՝

- ⇨ հակիրճ տեղեկատվություն՝ դիմելու հետաքրքրության եւ փորձառության մասին
- ⇨ ինքնակենսագրական
- ⇨ գնային առաջարկ ՀՀ դրամով (ներառյալ՝ հարկերը)

դիմելիս հնարավոր հարմարեցումների կարիքի պարագայում խնդրում ենք կապ հաստատել մեր թիմի հետ՝ info@changengo.org էլփոստով

❍ որոշումների կայացման գործընթացը

մեր թիմն ամփոփելու է դիմումները մինչ 2025 թվականի փետրվարի 12-ը եւ հետադարձ նամակով կապ է հաստատելու փորձագետների հետ 2025 թվականի փետրվարի 14-ին

- ☑ **ընտրությունը կատարվելու է փորձագետների ներկայացրած տվյալների եւ գնային առաջարկի հիմքով՝ համադրելով դրանք համագործակցության համար անհրաժեշտ պայմանների հետ,**
- ☒ **այն դիմումները, որոնք ներկայացվել են առանց դիմելու կարգի պահպանման, չեն դիտարկվելու:**

❍ կազմակերպության մասին

«Փոփոխություն» սոցիալ-առողջապահական հասարակական կազմակերպությունը կնոջ եւ քվիր մարդու առողջության իրավունքի (շահա)պաշտպանությամբ զբաղվող հարթակ է.

մեր նպատակն է փոխել Հայաստանում սոցիալ-առողջապահական համակարգը՝ մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականությունների ու ծառայությունների զարգացման միջոցով

մեր մասին ավելին՝ www.changengo.org